

մեռելի՛ մը նոյնիսկ ու երբեմն ալ հաճիդարձի ձեւերուն տակ: Կը յարդարուէին մեծ տուներու երեք-չորս յարկերուն վրայ հարիւրներու տեղ տուող երկար սեղանները ու սկիզբ կ'առնէր կոչունքը, տէրտէրով, երբեմն վարդապետով: Օղի: Գինի: Պար: Զուռնա: Թմբուկ: «է՛, առատութեանդ մեռնիմ, ողորմած թագաւոր» կ'ըսէին ծերերը ու կը խմէին: «Աստուած ընդունակ ընէ», կը պոռային տղաքը ու կ'ուտէին: Ու ես մէկն էի անոնցմէ, որոնք կը կոխէին իրենց ստամոքսը, աղիքները, փորին լման խորշերը առնուազն շաբթուան մը կշտումին համար: Դուք ժպտով կամ դառնութեամբ կը կարդաք սա տողերը...: Մաթիկ չէր տեսած այդ հանդիսանքները, որոնք 1900ին արդէն պատմութեան կը պատկանէին, մեր ժողովուրդին ենթարկուած մեծ կորուստներուն պատճառով: Թուրքին ա՞հը: Թերեւս պիտի փութաք հարցնելու: Ան ալ կը յոգնէր ինքնիրմէ: Մաթիկ ինծի կը բերէր, զարմանալի ու ժգնութեամբ, անյատակ կսկիծը, որ ռուս հոգիին ստորաշխարհը կը յօրինէր: Դուրեան սրբազան ինծի տուած էր «Մահուան տունի մը յիշատակները», երկու ժամ ետքը առնելու համար: Գիրքին անունը միայն մնացեր էր մտքիս: Աւելի յետոյ, տասնամ մը, ես պիտի հասկընայի, թէ ինչու այդպէս էր գործեր իմ ուսուցիչը:

Իմ ցաւերը բա՛ւ սակայն, առանց գիրքերէ թունաւորման պէտքին, որպէսզի Աստուծոյ անուշիկ արեւը, թերթ մը մենաւոր ծաղիկ, ազատ, ոստիկանէ, թուրքէ չհսկուած, չճանրացած ջրի ալ մը, ժպտիլ կրնալ մը, տանիքի մը տակ, հոգերուդ հետ գլուխ գլխի հաշտուիլ մը, առնուազն կուշտ անցած օր ելլէին արժէքի: Ընկեր Մաթիկը, այնքան յորդ՝ սա կալուածներուն պարագրկումը փորձած ատեն, այնքան իրաւ, մեզամօտ, կը դառնար հեռու, մշշային, ձախլիկ, երբ կը չարչարուէր՝ սեւեւելու համար պատկերը ռուս յեղափոխականին, գիծէ դուրս մարդեր, ահաւոր անցեալէ մը այդպէս մղուած դէպի իր օրերը, մօտաւորապէս դար մը զոհի խուլ ճնշումովը: Շատ աւելի վերջերը պիտի տեսնէի զիրենք, կեանքի ամէն